2.5. Գումարի որոշումը (մի քանի քայլով)

Երեխայի հետ զբաղվողին

1. **Կարենը 3 հատ 100-դրամանոց ուներ, իսկ Հասմիկը՝ 200 դրամով պակաս: Կարենը և Հասմիկը միասին ինչքա՞ն փող ունեին:**

Կարենը 3 հատ 100-դրամանոց ուներ, այսինքն՝ 300 դրամ (3 x 100= 300): Հասմիկը՝ Կարենի ունեցածից, այսինքն՝ 300 դրամից 200 դրամով քիչ փող ուներ, ուրեմն՝ 100 դրամ (300 – 200 = 100): Ուրեմն Կարենը 300 դրամ ուներ, իսկ Հասմիկը՝ 100 դրամ, հետևաբար երկուսը միասին **400 դրամ** ունեին (300 + 100 = 400):

2. **Դպրոցի հողամասի առաջին շարքում 18 ծառ կա, իսկ երկրորդ շարքում՝ 3 անգամ պակաս: Երկու շարքում միասին քանի՞ ծառ կա:**

Առաջին շարքում 18 ծառ կա, իսկ երկրորդում՝ դրանից, այսինքն 18-ից 3 անգամ քիչ: 18-ից 3 անգամ քիչ, այսինքն՝ 18 : 3 = 6: Առաջին շարքում 18 ծառ է, երկրորդում՝ 6, ուրեմն երկու շարքում միասին կլինի 18 + 6 = **24 (ծառ)**:

Ահի խնդիր լուծենք

1.



Գծապատկերին նայելով հաշվիր՝ գրապահարանի երկու դարակում միասին քանի՛ գիրք կա:

Պատասխան՝ 36 գիրք:

2.



Գծապատկերին նայելով հաշվիր՝ երկու օրում քանի՛ կիլոմետր անցան:

Պատասխանը՝ 30 մ:

3. Դպրոցը 60 աթոռ և 3 անգամ քիչ սեղան ունի: Դպրոցն ընդամենը քանի՞ աթոռ ու սեղան ունի:

Լուծիր ու պատասխանով վեպ ստուգիր:

Պատասխանը՝ 80:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Մի օրում մենք 9 ծառ տնկեցինք: Մյուս օրը՝ 2 անգամ ավելի: Երկու օրում քանի՞ ծառ տնկեցինք:

2. Քույրս 12 գնդակ ունի, ես՝ 2 անգամ պակաս: Քույրս ու ես քանի՞ գնդակ ունենք:

3. Առաջին օրը կրպակը 18 փաթեթ թերթ ստացավ, իսկ երկրորդ օրը՝ 2 անգամ պակաս: Կրպակը երկու օրում քանի՞ փաթեթ թերթ ստացավ:

4. Դույլի 8 լ ջուրը 4 անգամ շատ էր կաթսայի ջրից: Կաթսայի և դույլի մեջ միասին քանի՞ լիտր ջուր կար:

5. Ցուցահանդեսում Սուրենի 8 նկարն էր ցուցադրված: Դա Արմանի նկարներից 4 անգամ ավելի էր: Սուրենն ու Արմանը միասին քանի՞ նկար էին ցուցադրել:

6. Դասին 16 աղջիկ էր մասնակցում, որոնք տղաներից 2 անգամ շատ էին: Դասին քանի՞ երեխա էր մասնակցում:

7. Մի մարդից 14 կգ կաղամբ հավաքեցին, իսկ մյուսից՝ 2 անգամ ավելի: Երկու մարդից ընդամենը քանի՞ կիլոգրամ կաղամբ հավաքեցին:

8. Դպրոցի բուֆետ 48 կգ խնձոր և 6 անգամ քիչ տանձ բերեցին: Քանի՞ կիլոգրամ միրգ բերեցին:

9. Դպրոցի համար 90 նստարան գնեցին: Դրանք սեղաններից 9 անգամ շատ էին: Ինչքա՞ն կահույք գնեցին:

10. Հայրը 32 ձուկ բռնեց, իսկ որդին՝ 4 անգամ քիչ: Հայրը և որդին քանի՞ ձուկ բռնեցին:

11. Սոնան 4 տոպրակ ելակ հավաքեց, իսկ Անին՝ 3 անգամ ավելի: Նրանք ընդամենը քանի՞ տոպրակ ելակ հավաքեցին:

12. Մի կարասում 42 լ ջուր կա, իսկ մյուսում՝ 6 անգամ քիչ: Երկու կարասում միասին քանի՞ լիտր ջուր կա:

13. Առաջին ամսում դերձակն 8 զգեստ կարեց, իսկ երկրորդ ամսում՝ 2 անգամ ավելի: Երկու ամսում քանի՞ զգեստ կարեց:

14. Դասարանում 7 աղջիկ և 2 անգամ շատ տղա են սովորում: Դասարանում քանի՞ աշակերտ է սովորում:

15. Առաջին օրը 9 կգ լոլիկ հավաքեցին, իսկ երկրորդ օրը՝ 3 անգամ ավելի: Երկու օրում ընդամենը քանի՞ կիլոգրամ լոլիկ հավաքեցին:

16. Արմենը 30 կգ խաղող հավաքեց, իսկ Անուշը՝ 3 անգամ պակաս: Արմենն ու Անուշը միասին ինչքա՞ն խաղող հավաքեցին:

17. Առաջին օրը մենք 3 շարք վարդի թուփ տնկեցինք, ամեն շարքում՝ 6 թուփ: Երկրորդ օրը 2 անգամ ավելի տնկեցինք: Ընդամենը քանի՞ թուփ տնկեցինք:

18. Կրպակն առավոտյան 150 թերթ վաճառեց, իսկ կեսօրից հետո՝ 2 անգամ քիչ: Օրվա ընթացքում քանի՞ թերթ վաճառեց: